


Նախապես հաստատվել է

Հաստատվել է

<<ԷԷԸՕ>> ՓԲԸ խորհրդի 2023թ. մայիսի 19-ի նիստում
խորհրդի նախագահ

 Ա.ԽԱԿՉԱՏՐՅԱՆ

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար



Գ.ՍԱՆՈՍՅԱՆ

27 հունիս 2023թ.

<<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> ՓԲԸ

2022 ԹՎԱԿԱՆԻ

ՏԱՐԵԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

- I. Տեղեկատվություն Ընկերության, նրա կառավարման մարմինների մասին**
- II. Արտադրական գործունեություն**
- III. Ֆինանսատնտեսական գործունեություն**
- IV. Աշխատանք և աշխատավարձ**
- V. Տեղեկատվություն «Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման» ծրագրի վերաբերյալ**
- VI. Եզրափակիչ դրույթներ**
- VII. Հաշվապահական հաշվեկշիռներ**
- VIII. Հավելվածներ**
- IX. Տեղեկանքներ**
- X. Հաշվարկներ**
- XI. Տեղեկություններ խորհրդի անդամների մասին**

I. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

<i>անվանումը՝ հայերեն լրիվ</i>	-	<<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> փակ բաժնետիրական ընկերություն
<i>կրճապ</i>	-	<<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> ՓԲԸ
<i>նուսերեն</i>	-	Закрытое акционерное общество <<Оператор электроэнергетической системы>>
<i>կրճապ</i>	-	ЗАО <<Оператор электроэнергетической системы>>
<i>անգլերեն լրիվ</i>	-	<<Electro power systems operator>> Closed joint-stock company
<i>կրճապ</i>	-	<<Electro power systems operator>> CJSC
<i>հասցեն՝ հեռախոս՝ ֆաքս՝ էլ.փոստ՝ ինտերնետային կայք՝ հարկ վճարողի հաշվառման համարը</i>	-	ՀՀ, 0009, Երևան, Արմվյան փողոց 27 (+37410) 524725 (+37410) 547317 office@energyoperator.am www.energyoperator.am 01547732

<<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> ՓԲԸ հաշվարկային հաշվի համարները՝

<i><<Արդշինբանկ>> ՓԲԸ</i>	
<i><<Ադասյան>> մասնաճյուղ</i>	247460049700
<i><<Արաբկիր>> մասնաճյուղ</i>	247120046906
<i><<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ</i>	
<i><<Մյասնիկյան>> մասնաճյուղ</i>	16044033655200

*Պեդ.ռեգիստրում գրանցման համարը և ամսաթիվը՝
27312003639, 05.11.2003թ., վկայական թիվ 03 Ա 062403*

*Իրավակազմակերպական ձևը՝
Փակ բաժնետիրական ընկերություն*

Ընկերության կորպորատիվ կառուցվածքը՝

- ա) Բաժնետերերի ընդհանուր ժողով
- բ) Խորհուրդ
- գ) Խորհրդի հանձնաժողովներ (2022թ. ընթացքում չեն ստեղծվել)
- դ) գործադիր մարմին:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 1910747960 դրամ, որը կազմում է 316349 հատ հասարակ (սովորական) բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը՝ 6040 դրամ:

Բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, վճարված են նրա կողմից և կառավարվում են ՀՀ կառավարության և նրա լիազորված անձի՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի կողմից:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՅՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ընկերության նպատակն է տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը, որի համար իրավունք է տրված և պարտավորեցված էլեկտրաէներգետիկական համակարգում մատուցել էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայություն՝ հետևյալ գործառույթներով.

1. էլեկտրաէներգետիկական համակարգում կարճաժամկետ պլանավորում և կարգավարում.
2. էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատիվ կառավարում.
3. էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի զարգացման պլանավորում.
4. տարածաշրջանային էլեկտրաէներգետիկական համակարգերի հետ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի համատեղ աշխատանքի ապահովում.
5. էլեկտրաէներգետիկական համակարգում՝ համաձայն Լիցենզիայի պայմանների և Շուկայի կանոնների, իր օպերատիվ ենթակայության ներքո գտնվող Ռելեական պաշտպանության և Հակավթարային ավտոմատիկայի սարքվածքների նախադրվածքների հաշվարկում, առաջադրում և դրանց կատարման վերահսկում.
6. հաճախականության և փոխհոսքերի կարգավորման, հաշվեկշռման, ինչպես նաև համակարգային ծառայություններ մատուցելու համար նախատեսված տեղակայանքների պատրաստականության ստուգում.
7. էլեկտրաէներգետիկական համակարգում կրիտիկական (վթարային) իրավիճակներում էլեկտրամատակարարման սահմանափակումների ծրագրերի կիրառման վերաբերյալ որոշումների կայացում.
8. հաղորդման ցանցին միացվող նոր կամ վերակառուցվող էներգատեղակայանքներ և սարքավորումների հաղորդման ցանցին միացնելու

տեխնիկական պայմանների և միացման գործողությունների ծրագրի վերաբերյալ համաձայնության տրամադրում.

9. էլեկտրական էներգիայի (հզորության) միջպետական առևտրի խթանման և տարանցման ապահովման նպատակով համագործակցություն այլ երկրների համապատասխան կազմակերպությունների հետ.

10. Շուկայի կանոններով նախատեսված այլ գործառույթներ:

Լիցենզիայի պայմանների 5-րդ կետի 1-7-րդ ենթակետերով ամրագրված գործառույթները Լիցենզավորված անձն իրականացնում է բացառիկ իրավունքով:

Ընկերությունը կարող է զբաղվել օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով, ինչպես նաև լիցենզիայի (հատուկ թույլտվություն) առկայության դեպքում այլ գործունեությամբ:

«ՎՎ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշմամբ, Ընկերությանը տրված լիցենզիայի գործունեության ժամկետը 2020 թվականին երկարաձգվել է մինչև 2025թ. դեկտեմբերի 9-ը:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

1. Բաժնետիրոջ ընդհանուր ժողով՝ Ընկերության կառավարման բարձրագույն մարմին.

Գ.Սանույան

- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար, ընկերության բաժնետոմսերի կառավարման 100% լիազորությունները իրականացնող

Հաշվետու տարում գումարվել է մեկ տարեկան ընդհանուր ժողով (28.06.2022թ.): ժողովը գումարվել է Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3 հասցեում:

2022թ. հունվարի 17-ին և հունվարի 24-ին, նույն հասցեում տեղի է ունեցել Ընկերության արտահերթ ընդհանուր ժողովներ:

2. Խորհուրդ՝ Ընկերության կանոնադրության 13 հոդվածը (13.1-ից 13.7 կետեր)՝ սահմանում է Խորհրդի բացառիկ և պատվիրակված իրավասությունները:

Խորհրդի գործունեությունը

2022թ. ընթացքում Խորհուրդը գումարել է 2 խորհրդի նիստ՝ որից 1 նիստը անց է կացվել հեռակա քվեարկության միջոցով: Խորհրդի նիստերի օրակարգը և դրան ուղեկցող փաստաթղթերը Խորհրդի անդամներին է ուղարկվել նիստի օրվանից առնվազն 10 օր առաջ:

Գործադիր մարմին

Ընկերության գործադիր մարմինը բաղկացած է մեկ գլխավոր տնօրենից՝ Մնացական Անդրիասի Մնացականյան:

2022թ. Ընկերության ներքին աուդիտ իրականացնող անձ և կորպորատիվ քարտուղար չի նշանակվել:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003թ. մայիսի 2-ի <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> և <<Էներգակարգաբերում>> փակ բաժնետիրական ընկերություններ ստեղծելու մասին>> N779-Ա որոշման 1 կետի ա) ենթակետի պահանջներին համապատասխան ստեղծվել է <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> փակ բաժնետիրական ընկերություն:

Նույն որոշման 6-րդ կետի համաձայն <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահվել են հետևյալ պաշտոնատար անձանցից յուրաքանչյուրին քվեարկող բաժնետոմսերի ընդհանուր թվի 1/5 չափով.

Հայաստանի Հանրապետության վարչապետ

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար

ՀՀ էներգետիկայի նախարար

ՀՀ արդարադատության նախարար

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետ

<<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> ՓԲԸ-ի հիմնադիր ժողովը տեղի է ունեցել 2003թ. հոկտեմբերի 30-ին, որի որոշման 1-կետով հաստատվել է <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> ՓԲԸ-ի ստեղծումը:

ՀՀ կառավարության 2003թ. նոյեմբերի 6-ի <<<< էներգետիկայի ոլորտի պետական ընկերությունների 2003 – 2007 թվականների ֆինանսական առողջացման ծրագրի ու 2003 – 2007 թվականների ֆինանսական հոսքերի կանխատեսումների և մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին>> N1694-Ն որոշման 2-րդ կետի պահանջներին համապատասխան Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող Ընկերության բաժնետոմսերի լիազորությունները վերապահվել է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարին:

Ընկերության կանոնադրությունը Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվել է 2003թ. նոյեմբերի 5-ին:

ՀՀ բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի 2003թ. դեկտեմբերի 9-ի <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> ՓԲԸ-ին էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման լիցենզիա տրամադրելու մասին>> N87-Ա որոշման 1 կետով Ընկերությանը տրամադրվել է էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման լիցենզիա, որի պայմանները հաստատվել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017թ. մայիսի 17-ի N163Ա որոշմամբ:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընկերությունը իր կառուցվածքում ունի <<Էներգակապ>> մասնաճյուղ և Արցախի հանրապետությունում գործող <<Գանձասար օպերատոր>> ՓԲԸ:

Ընկերության տնօրինության տակ են գտնվում ներքոհիշյալ վարչական և արտադրական տարածքները.

<< Կառավարության 2003թ. մայիսի 2-ի <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> և <<Էներգակարգաբերում>> փակ բաժնետիրական ընկերություններ ստեղծելու մասին N779-Ա որոշման հավելված 1-ով փոխանցվել է շենք շինություն (<<Էներգակապ>> մասնաճյուղ), որոնք սեփականության իրավունքով՝ 2005թ. հոկտեմբերի 18-ին, 1092.3 քառ. մետր մակերեսով, գրանցված են << կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 3-6 մատյանի 000295 համարի տակ, քաղ. Երևան, Արաբկիր համայնք, Մալխասայանց փող. թիվ 2 հասցեում, այդ թվում՝ վարչական շենք, պահեստներ, ավտոտնակներ, ծածկեր, բենզալցակայան:

Կադաստրի պետական կոմիտեում 2006թ.-ից քաղ.Երևան, Մալխասայանց 2 հասցեի 0.265 հա հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը՝ << կառավարության 01.10.05թ. N199-Ն որոշման և << հողային օրենսգրքի 23 հոդվածի պահանջների համաձայն, փոխանցվել է <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> ՓԲԸ-ին:

2006թ. Ընկերության կողմից անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով զբաղեցրած հողամասի (<<Էներգակապ>> մասնաճյուղ - 0.265 հա) նկատմամբ գրանցվել է սեփականության իրավունք, որը ակտիվների կազմում ներառելու և հաշվապահական ձևակերպումներ տալու վերաբերյալ << ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 2/3 1-5/3-3058, 07.03.06թ. պարզաբանմամբ որպես հետաձգված եկամուտ Ընկերությունը ձևակերպել է 105.979 մլն դրամ: Նշված եկամուտը պետք է ճանաչվի որպես եկամուտ սխտեմատիկ և ռացիոնալ հիմունքով, տվյալ հողամասի վրա կառուցված շենքերի, շինությունների միջին կշռված

մնացորդային օգտակար ծառայության ժամկետի ընթացքում և վերագրվի հաշվետու ժամանակաշրջանի եկամուտներին:

«Կառավարության 2009թ. օգոստոսի 13-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերությանը գույք հանձնելու մասին» N924-Ա որոշմամբ «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ Երևան քաղաքի Աբովյան 27 հասցեում գտնվող՝ 3436.95 քառ. մետր մակերեսով ու 2327154 հազ.դրամ գնահատված արժեքով շենքը և դրա սպասարկման ու օգտագործման համար հատկացված 0.13639 հեկտար հողատարածքը ներդրվել է «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում: «Կառավարության 2010թ. փետրվարի 18-ի N150-Ա որոշմամբ «3436.95 քառ. մետր մակերեսով» բառերը փոխարինվել են «3536.95 քառ. մետր մակերեսով» բառերով, իսկ «2327154» թիվը՝ «2343603»:

2010թ. ապրիլի 12-ին սեփականության իրավունքով՝ 3536.95 քառ. մետր մակերեսով շենքը և 0.13639 հեկտար հողատարածքը՝ գրանցված են «Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 010063-21 մատյանի 00210 համարի տակ, քաղ. Երևան, Կենտրոն համայնք, Աբովյան փող. թիվ 27 հասցեում:

«Կառավարության 2017թ. դեկտեմբերի 7-ի ««Կառավարության 25.02.2010թ. N182-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու և «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում գույք ներդնելու մասին» N1557-Ա որոշման համաձայն, ք.Երևան, Ծովակալ Իսակովի 50/21 հասցեում 0.25555 հեկտար մակերեսով հողամասը 38700.0 հազ.դրամ շուկայական արժեքով ներ է դրվել «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում՝ Պահուստային կարգավարական կենտրոն կառուցելու նպատակով, որը համապատասխան գրանցում է ստացել «Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի

պետական կոմիտեում, ինչպես նաև համապատասխան գրանցում է ստացել ՀՀ պետական ռեգիստրում:

<<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> ՓԲԸ-ի խորհրդի 19.12.2019թ. նիստի <<Արցախի Հանրապետությունում ընկերություն ստեղծելու վերաբերյալ>> որոշման հիման վրա, 2021թ. հոկտեմբերի 10-ին խորհուրդը հաստատել է Արցախի Հանրապետությունում գործող <<Գանձասար օպերատոր>> ՓԲԸ-ի կանոնադրությունը, որը Արցախի Հանրապետության օրենքներին համապատասխան գրանցվել է ԱՀ պետական ռեգիստրում՝ որպես <<Գանձասար օպերատոր>> ՓԲԸ, ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից <<Գանձասար օպերատոր>> ՓԲԸ-ին տրվել է գործունեության լիցենզիա և սահմանվել է սակագին: Նշված գործառույթները իրականացնելու նպատակով <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> ՓԲԸ-ն <<Գանձասար օպերատոր>> ՓԲԸ-ին տրամադրել է 2.4 մլն դրամ: <<Գանձասար օպերատոր>> ՓԲԸ-ն իր գործունեությունը սկսել է 2022թ. հունվարի 1-ից:

Խորհրդի 24.12.2021թ. նիստում հաստատված <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> ՓԲԸ-ի վարչակազմակերպական կառուցվածքում ընդգրկվել է Արցախի Հանրապետության <<Գանձասար օպերատոր>> ՓԲԸ-ն, որպես առանձին կառուցվածքային ստորաբաժանում:

II. ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆ

2022թ. ընթացքում Ընկերությունը, իրականացրել է օպերատորի ծառայության մատուցման լիցենզիայով նախատեսված բոլոր գործառույթները՝ ապահովելով ՀՀ էներգահամակարգի անվտանգությունն ու հուսալիությունը: Տարվա ընթացքում Կենտրոնական կարգավարական ծառայության աշխատակիցների մեղքով վթարներ չեն արձանագրվել:

Հանդիսանալով էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակից, <<ԷԷՀՕ>> ՓԲԸ-ն իր փոխհարաբերությունները շուկայի այլ մասնակիցների հետ վարում է <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և էլեկտրաէներգետիկական համակարգի լիցենզավորված այլ անձանց փոխհարաբերությունների կարգը հաստատելու մասին>> ՀՀ ՀԾԿՀ 2008թ. հուլիսի 2-ի N347-Ն որոշմանը համապատասխան: <<ԷԷՀՕ>> ՓԲԸ-ի գործունեության ոլորտում կարևոր տեղ է հատկացված նաև ՀՀ ՀԾԿՀ <<<< էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ապահովման կանոններ>> 2004թ. դեկտեմբերի 24-ի N176-Ն որոշմամբ սահմանված դրույթների իրագործմանը:

Ընկերությունը, լիցենզիայի պայմաններին համապատասխան, տարվա ընթացքում մշակել և արտադրող, բաշխող և տեղափոխող ընկերություններին է տրամադրել հրահանգներ:

Տեխնիկական բարձր մակարդակով և փոխադարձ վստահության մթնոլորտում է ապահովվում Իրանի Իսլամական Հանրապետության <<Թավանիր>> ընկերության ազգային կարգավարական կենտրոնի և Ընկերության կենտրոնական կարգավարական ծառայության կարգավարների միջև փոխհարաբերությունների և 220կՎ Ահար-1, Ահար-2 միջպետական էլեկտրահաղորդման գծերի օպերատիվ կառավարման վերաբերյալ կնքված համաձայնագրով նախատեսված պահանջների կատարումը: Ըստ անհրաժեշտության վերամշակվել են արդեն գործողության մեջ գտնվող հրահանգները և տրամադրվել համապատասխան ընկերություններին:

Ընկերությունը սպասարկել է կապուղիներ, մալուխային և օդային կապի գծեր, ռադիո և այլ հատուկ կապի ու հեռուստամեխանիկայի սարքավորումներ և SCADA/կապ համակարգը, որն իր մեջ ներառում է՝

ՍԿԱԴԱ/ԿԱՊ համակարգը, որն իր մեջ ներառում է

- | | |
|---|-----------|
| 1. Հեռամեխանիկայի սարքեր (RTU) | - 28 հատ |
| 2. ՍԿԱԴԱ/սերվերներ | - 6 հատ |
| 3. Տեսապատ | - 2 հատ |
| 4. Տեսապատի պրոյեկցիոն սարքեր | - 24 հատ |
| 5. Ժամանակի սինխրոնիզացիոն սարք | - 4 կոմպ. |
| 6. Երկարատև ձայնագրման սարք | - 2 հատ |
| 7. IP հեռախոսային կայան -կապի սերվերներ | - 4 հատ |
| 8. Ռինիվերսալ չափիչ սարքեր (P130EN) | - 477 հատ |

9. Համակարգիչներ (ՍԿԱԴԱ/ԿԱՊ համակարգում)	- 28 հատ
10. Ցանցային ղեկավարման համակարգեր (NMS)	- 3 հատ
11. Օպտիկական վերջնամասային սարքեր (OLTE)	- 52 հատ
12. Բարձր հաճախականության Սարքավորումներ (DPLC)	- 31 լրակազմ - 31 կապուղի
13. ԱՀԿ Panasonic	- 12 հատ
14. Օպտիկամանրաթելքային ճոպան (OPGW)	- 1099.5 կմ
15. Օպտիկամանրաթելքային մալուխ (OPAC)	- 41.382 կմ
16. Օպտիկամանրաթելքային մալուխ (ADSS)	- 39.324 կմ
17. Մալուխային կապի պղնձյա գծեր	- 4.5 կմ - 18 կապուղի
18. Էներգասնուցման անխափան սարքեր՝	
• լիցքավորման ագրեգատներ (Golero)	- 16 հատ
• ակումյատորային մարտկոցներ	- 16 կոմպ.
• շարժիչ գեներատորներ EP 6000	- 16 հատ
• 220Վ/48Վ-փոխակերպիչներ	- 16 հատ
• 48Վ/220Վ -փոխակերպիչներ	- 30 հատ
• Անխափան սնուցման սարք (UPS) 40 կՎա	- 5 հատ
19. Էլեկտրասնուցման ռեզերվ ավտոմատ միացման Համակարգ	- 2 հատ
20. Դիզել գեներատոր 150 կՎա	- 2 հատ
21. Անալոգային հեռախոսայի փոխակերպիչներ (Mediatrix)	- 42 հատ
22. ՍԿԱԴԱ համակարգի ցանցային (swich) կոմուտատորներ	- 50 հատ
23. ՍԿԱԴԱ/ԿԱՊ համակարգի IP և թվային հեռախոսներ	- 316 հատ
24. ՍԿԱԴԱ/ԿԱՊ համակարգի Անալոգային հեռախոսներ	- 86 հատ
25. Ռադիոկայան FM 301-160	- 12 հատ - 12 կապուղի
26. Ռադիոռելեական սարքավորումներ <<Малютка>>	- 6 հատ - 12 կապուղի
27. Ռադիոսարքավորումներ air FIBER 5x	- 10 կայան - 8 կապուղի

Բացի վերոհիշյալ սարքավորումների և գծերի սպասարկումից, կատարվել են նաև հետևյալ արտապլանային և վթարավերականգնողական աշխատանքները.

Կենտրոնական ծառայություն

1. <<Երևան>> ՀԷԿ-ում SDH OLTE սարքավորման SFP մոդուլների փոխարինում:
2. <<Հաղթանակ>> 220/110/10 կՎ Ե/Կ-ում SDH OLTE սարքավորման սնուցման աղբյուրի մոդուլի փոխարինում:

3. <<ԲԷՑ>> ՓԲԸ ադմինիստրատիվ շենքի SDH STM -1 SFP մոդուլի փոխարինում:
4. <<Մարաշ>> 220/110/10 կՎ ե/կ-ում SDH STM -1 SFP մոդուլի փոխարինում:
5. <<Հրազդան>> ՀԷԿ-ում SDH STM-1 SFP մոդուլի փոխարինում:
6. <<Արզնի>> ՀԷԿ-ում SDH STM-1 սարքավորման սնուցման աղբյուրի մոդուլի փոխարինում:
7. <<Աշնակ>> 220/110/10 կՎ ե/կ-ում SDH STM-1 սարքավորման (servis) մոդուլի փոխարինում:
8. <<Կամո>> 220/110/35 կՎ ե/կ - <<Հրազդան>> ՀԷԿ PLC սարքավորման մակարդակների կարգաբերում:
9. <<Եղեգնաձոր>> 220/110/35 կՎ ե/կ-ում PLC-ի սարքավորման երկու սնուցման աղբյուրների նորոգում:
10. SDH OLTE սարքավորման սնուցման աղբյուրների վերականգնում:
11. <<Վանաձոր-2>> 220/110/35 կՎ ե/կ-ում PLC սարքավորման AMX-500 մոդուլի վերականգնում:
12. <<Մարաշ>>220/110/10 կՎ ե/կ-ում - <<Արովյան>> 110/10 ե/կ-ում PLC սարքավորման սնուցման աղբյուրի վերանորոգում:
13. <<Ապարան>> 110/10 կՎ ե/կ-ում PLC սարքավորման մակարդակի կարգաբերում:
14. <<Շինուհայր>> 220/110/35 կՎ ե/կ-ում վերակառուցման աշխատանքների ժամանակ իրականացվել են կապուլիների տեղափոխում:
15. <<Սևան>> ՀԷԿ-ում SDH OLTE սարքավորման մակարդակի կարգաբերում:
16. <<Լիճք>> 220/110/35 կՎ ե/կ-ում OLTE սարքավորման տեղափոխում:
17. <<Մեղրի 1.2>> 220/110 կՎ ե/կ-ում ETL-500 սարքավորման սնուցման աղբյուրի վերանորոգում:
18. SDH համակարգի կապի հուսալիությունը ապահովելու նպատակով կառուցվել է նոր կապուլի՝ <<Հրազդան-5-րդ բլ.>> - <<Կամո>> 220/110/35 կՎ ե/կ -<<Լիճք>> 220/100/35 կՎ ե/կ - <<Շինուհայր>> 220/110/6 կՎ ե/կ ուղղություններով:

Օպտիկամալուխային ծառայություն

1. <<Երևան>> ԶԷԿ- <<Արարատ-2>> 220/110/6 կՎ ե/կ օպտիկական կապուլիների տեղափոխում <<Արարատ-2>> 110 կՎ ՕԳ-ից <<Էրեբունի>> 220 կՎ ՕԳ-ով:
2. <<Շինուհայր>> 220/110/35 կՎ ե/կ-ում <<Որոտան-1>> 220կՎ ՕԳ-ի օպտիկայի վերջնամասային սարքերի տեղափոխում նոր կապի սենյակ, օպտիկական մալուխների միացումներ:

3. <<Շահումյան -2>> 220/110/10 կՎ Ե/կ- <<ՀԱԷԿ>> օպտիկական կապուղիների տեղափոխում <<Աշտարակ>>-<< Անուշ>> 110 կՎ ՕԳ-երից <<Սիփան>> 220 կՎ ՕԳ-ով:
4. <<Քաղսի>> 110 կՎ ՕԳ-ի կայծակից վնասված հատվածում վնասված OPGW-ի ապամոնտաժում, նոր OPGW -ի մոնտաժում, միացման տուփերի տեղադրում:
5. <<Ձեյթուն-1,2>> 110 կՎ ՕԳ-երի ուղեգծի փոփոխության հետևանքով գործող OPGW-ի ապամոնտաժում, նոր OPGW -ի մոնտաժում, միացման տուփերի տեղադրում:
6. <<Եր.ՋԷԿ>>-ում, <<Նաիրիտ-1,2>> 110 կՎ ՕԳ-ի վրա կարճ միացումից վնասված OPGW-ի ապամոնտաժում, նոր OPGW մոնտաժում, միացման տուփերի տեղադրում:
7. <<Աշտարակ>> 110 կՎ ՕԳ-ի ուղեգծի փոփոխության հետևանքով գործող OPGW-ի ապամոնտաժում, նոր OPGW-ի մոնտաժում, միացման տուփերի տեղադրում:
8. <<Գորիս>> 110 կՎ ՕԳ-ի պատերազմական գործողություններից վնասված OPGW-ի ապամոնտաժում, նոր OPGW-ի մոնտաժում, միացման տուփերի տեղադրում:
9. <<Սպանդարյան>> ՀԷԿ –<<Տոլորս>> ջրամբար վնասված օպտիկական մալուխի ապամոնտաժում, նոր օպտիկական մալուխի մոնտաժում, միացման տուփերի տեղադրում:
10. <<Հաղթանակ>> 220/110/10 կՎ Ե/կ-պահուստային կարգավարական կետ վնասված օպտիկական մալուխների վերականգնում, միացման տուփերի տեղադրում:
11. <<Երևան>> ՋԷԿ–<<Արմփատեր>> ՋԷԿ ռելեական պաշտպանության օպտիկական կապուղիների տրամադրում:
12. << Երևան>> ՋԷԿ–<<Նաիրիտ>> 110/35/6 կՎ Ե/կ ռելեական պաշտպանության օպտիկական կապուղու վնասվածքի վերացում:
13. <<Արարատ-2>>220/110/6 կՎ Ե/կ-ում վերակառուցման աշխատանքների հետ կապված օպտիկամանրաթելքային մալուխի ուղեգծի փոփոխություն:
14. <<Հրազդան>> ՋԷԿ - <<Կամո>> 220/110/35 կՎ Ե/կ – <<Լիճք>> 220/110/35 կՎ Ե/կ - <<Շինուհայր>> 220/110/6 կՎ Ե/կ օպտիկական կապուղիների կառուցում:
15. <<Մեղրի-1,2>> 220 կՎ ՕԳ-երով <<Շինուհայր>> 220/110/6 կՎ Ե/կ–<<Ագարակ>> 220/110 կՎ Ե/կ կապուղիների կառուցում (օղակ10):
16. Օդային գծերի, OPAC-ների, ADSS-ների շրջայցեր ըստ հաստատված տարեկան գրաֆիկների:
17. Օբյեկտներում օպտիկամանրաթելքային միացումների պրոֆիլակտիկա ըստ հաստատված տարեկան գրաֆիկների:

Ռադիո ծառայություն

1. <<Քոնթուր Գլոբալ>> ադմինիստրատիվ շենք – <<Շինուհայր>> 220/110/6 կՎ և <<Ագարակ>> 220/110 կՎ ե/կ-ների թվային սարքերի և IP հեռախոսների միացում և կարգավորում:
2. <<Արգել>> ՀԷԿ –ում, <<Արգի>> ՀԷԿ-ում, <<Մարաշ>> 220/110/10 կՎ ե/կ-ում և <<Քանաքեռ>> ՀԷԿ-ում թվային սարքերի IP հեռախոսների նորոգում և կարգավորում:
3. <<Արաքս>> մ/ճ-ում (հերթապահ), <<Երևան>> ԶԷԿ-ում, Ռադիոկայանի FM301-160 և IP հեռախոսների նորոգում:
4. <<Վեդի>> էլ.ցանցում, <<Խոր Վիրապ>> 35/10 կՎ ե/կ-ում, <<Մխչյան-2>> 110/10 կՎ ե/կ-ում, ռադիոկայանների նորոգում և կարգավորում, ալեհաքների ստուգում:
5. <<Աշնակ>> 220/110/10 կՎ ե/կ-ում հեռախոսների կարգավորում և մալուխների նորոգում:
6. <<Շամբ>> ՀԷԿ-ում, <<Տաթև>> ՀԷԿ-ում, <<Սպանդարյան>> ՀԷԿ-ում, <<Շինուհայր>> 220/110/6 կՎ ե/կ-ում, <<Քոնտուր Գլոբալ>> ադմինիստրատիվ շենքում, թվային սարքերի, ռադիոկայանների <<air fiber>> 5x և հեռախոսների նորոգում և կարգավորում:
7. <<Արգել>> ՀԷԿ-ի ՕԿԱ-ում թվային սարքի (սվիչ) նորոգում և կարգավորում:
8. <<ՀԱԷԿ-Պոռոթ>> 110 կՎ ե/կ-ում ՌԴԼ-ին կայանի (малютка) նորոգում և ալեհավաքի կարգավորում:
9. Կառավարական №3 շենքում UTP մալուխի մոնտաժ և IP հեռախոսների միացում:
10. <<ԱԻՆ>>-ի ՃԿԿ շենքում հեռախոսների UTP մալուխի անցկացում և նոր IP հեռախոսի տրամադրում:
11. <<ՀԱԷԿ-Սևջուր>> ե/կ-ում ՌԴԼ-ին կայանի (малютка) նորոգում և ալեհավաքի կարգավորում:
12. <<ԱԻՆ>>-ի շենքում ՌԴԼ-ին կայանի (малютка) ալեհավաքի և PK -75 կուսկսիալ մալուխի նորոգում և կարգավորում:
13. <<Երևան>> ՀԷԿ –ի պատվար-<<Չովունի>> 220/110/10 կՎ ե/կ-ի, Ռադիոկայանի <<air fiber>> նորոգում և կարգավորում:
14. <<Խարբերդ>> ե/կ-ի և <<Մասիս>> 110 ե/կ-ի <<FM301-160>> ռադիո կայանների նորոգում և ալեհավաքների աստուգում:
15. <<ՀԷՑ>> ՓԲԸ-ի շենքում UTP մալուխի մոնտաժում ՍԿԱԴԱ համակարգի համակարգիչների միացում:
16. <<Երևան>> ՀԷԿ –ի IP հեռախոսի նորոգում և թվային սարքերի պրոֆիլակտիկա:

Էլեկտրասնուցման ծառայություն

1. <<Շինուհայր>> 220/110/6 կՎ և <<Աշնակ>> 220/110/10 կՎ ե/կ-ներում սնուցման մարտկոցների փոխարինում:
2. <<Կամո>> 220/110/35 կՎ ե/կ մատոր գեներատոր վերանորոգում:
3. <<Աշնակ>> 220/110/10 կՎ ե/կ լիցքավորման ագրեգատ տեղադրում:
4. <<Լիճք>> 220/110/35 կՎ ե/կ լիցքավորման ագրոգատորի տեղադրում:

5. ԿԿՀ-ի UPS 3 տեղադրում, մոնտաժում և միացում:
6. <<Կամո>> 220/110/35 կՎ ե/կ լիցքավորման ագրեգատի տեղափոխում:
7. <<Մարաշ>> 220/110/10 կՎ և <<Արարատ>> 220/110/6 կՎ ե/կ-ներում սնուցման մարտկոցների փոխարինում:
8. Երևան ՋԷԿ ԲԲՍ-ում լիցքավորման ագրեգատորի տեղադրում:
9. <<Ալավերդի-2>> 220/110/35կՎ, <<Ագարակ>> 220/110, <<Վանաձոր-2>> 220/110/35 ե/կ-ներում լիցքավորման ագրեգատորների ապամոնտաժում:
10. <<Էներակապ>> մ/ճ-ում լիցքավորման ագրեգատորի տեղադրում:
11. Մատոր գեներատորների լիցքավորում և փորձարկում թվով` 16 հատ:
12. <<Հրազդան>> ՀԷԿ PLC սնուցման բլոկի վերանորոգում:
13. <<Կամո>> 220/110/35 կՎ PLC սնուցման բլոկի վերանորոգում:
14. <<Արզնի>> ՀԷԿ 220/48Վ փոխակերպիչի վերանորոգում:
15. <<Արգել>> ՀԷԿ անխափան սնուցման սարքի վերանորոգում:
16. <<Աշնակ>> 220/110/10 կՎ ե/կ-ում 48Վ սնուցման սարքի փոխարինում:
17. <<Հրազդան ՋԷԿ>> ԲԲԸ 48/220Վ փոխակերպիչի սարքի վերանորոգում:
18. <<Հրազդան>> ՀԷԿ անխափան սնուցման սարքի վերանորոգում:
19. <<Արարատ-2>> 220/110/6 կՎ ե/կ 48Վ լիցքավորման ագրեգատի վերանորոգում:
20. <<Կամո>> 220/110/35 կՎ ե/կ 48/220 Վ փոխակերպիչ սարքի վերանորոգում:
21. <<Աշնակ>> 220/110/10 կՎ ե/կ 220Վ փոխակերպիչի միացում:
22. <<Արգել>> ՀԷԿ անխափան սնուցման սարքի վերանորոգում:
23. <<Լիճք>> 220/110/35 կՎ ե/կ փոխակերպիչ սարքի վերանորոգում:
24. <<ՀԱԷԿ>> ՓԲԸ 48/220Վ փոխակերպիչ բլոկի փոխարինում:
25. <<Կամո>> 220/110/35 կՎ ե/կ լիցքավորման ագրեգատի բլոկի փոխարինում:
26. <<Եղեգնաձոր>> 220/110/35 կՎ ե/կ և <<Շամբ>> ՀԷԿ-ում սնուցման մարտկոցների փոխարինում:
27. <<Տաթև>> և <<Սպանդարյան>> ՀԷԿ-ում սնուցման մարտկոցների փոխարինում:
28. <<Արարատ-2>> 220/110/6 կՎ ե/կ 48/220Վ փոխակերպիչի փոխարինում:
29. <<Հրազդան ՋԷԿ>> ԲԲԸ փոխակերպիչի փոխարինում:
30. <<Վանաձոր-2>> 220/110/35 կՎ ե/կ PLC սնուցման բլոկի վերանորոգում:
31. <<Զովունի>> 220/110/10 կՎ և <<Կամո>> 220/110/35 կՎ ե/կ-ում սնուցման մարտկոցների փոխարինում:
32. <<Շահումյան -2>> 220/110/10 կՎ ե/կ և <<ԲԷՑ>> ՓԲԸ սնուցման մարտկոցների փոխարինում:
33. <<Լիճք>> 220/110/35 ե/կ ՍԿԱԴԱ/ԿԱՊ համակարգի սնուցման սարքերի վերանորոգում:
34. <<Աշնակ>> 220/110/10 կՎ ե/կ ՍԿԱԴԱ/ԿԱՊ համակարգի սնուցման սարքերի վերանորոգում:
35. 48/220Վ փոխակերպիչի սարքերի վերանորոգում:
36. Վարչական շենքի 1264 ե/կ էլ.թողարկչի (ABP)փոխարինում:
37. Վարչական շենքի ջեռուցման համակարգի աշխատանքների վերահսկում:
38. Վարչական շենքի արտաքին լուսավորման լուսարձակների վերանորոգում:

39. <<Շինուիայր>> 220/110/6 կՎ Ե/կ OLTE սարքավորման սնուցման հզորության ավելացում:
40. <<Եղեգնաձոր>> 220/110/35 կՎ Ե/կ 48/220Վ փոխակերպիչի վերանորոգում և ավելացում:
41. <<Շամբ>> ՀԷԿ 48/220Վ փոխակերպիչի վերանորոգում:
42. <<Ալավերդի -2>> 220/110/35 կՎ Ե/կ փոխակերպիչի վերանորոգում:
43. <<Տաթև>> ՀԷԿ-ի 48/220Վ փոխակերպիչի վերանորոգում:
44. <<Լիճք>> 220/110/35 կՎ Ե/կ-ում կապի սարքավորումների ապամոնիտաժային և մոնիտաժման աշխատանքներում մասնակցություն:
45. <<Լիճք>> 220/110/35 կՎ Ե/կ-ում և <<Հրազդան>> ԲԲՍ-ում սնուցման մարտկոցների փոխարինում:
46. 2022 թվականի պրոֆիլակտիկ աշխատանքների կատարում ըստ գրաֆիկի:
Կատարվել են նաև սեզոնային և ձմեռային նախապատրաստական աշխատանքներ:

2022թ. ապահովվել է, հանրապետության տարածքում, կապի ծառայությունների բնականոն աշխատանքն ապահովող մարդատար և բեռնատար ավտոմեքենաների նորմալ շահագործումն ու նորոգումը:

III. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1. Եկամուտներ և ծախսեր (առանց ԱԱՀ)

1.1. Եկամուտներ (առանց ԱԱՀ) (գործառնական)

1.1.1. Ընկերության տարեկան գործառնական եկամուտը հիմնական գործունեությունից կազմել է 2264.0 մլն դրամ (հավելված 1), խորհրդի կողմից հաստատված նախահաշվով նախատեսված 2239.7 մլն դրամ գումարի դիմաց (նախատեսվածից ավել եկամուտը կազմել է 24.3 մլն դրամ): Նշված եկամտի գոյացման աղբյուրները հետևյալն են. 1637.8 մլն դրամը՝ ՀՀ տարածքում մատուցած ծառայությունների դիմաց (վճարող՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ և շուկայի մասնակից որակավորված սպառողներ), նախահաշվով նախատեսված էր 1628.75 մլն դրամ, (նախատեսվածից ավել եկամուտը կազմել է 9.05 մլն դրամ); «ԵրՋէկ» ՓԲԸ-ի կողմից Իրանից ներկրված գազի դիմաց էլեկտրաէներգիայի արտահանման ընթացքում Ընկերության մատուցած ծառայության դիմաց ստացված եկամուտը կազմել է 282.8 մլն դրամ, նախահաշվով նախատեսված էր 260.97 մլն դրամ, (նախատեսվածից ավել եկամուտը կազմել է 21.83 մլն դրամ): Որպես այլ գործունեությունից ստացված լրացուցիչ եկամուտ՝ 343.4 մլն դրամ (նախահաշվով նախատեսված էր 350.0 մլն դրամ), այդ թվում Վրաստան արտահանման ընթացքում մատուցված ծառայությունից՝ 84.4 մլն դրամ, բանկի ավանդի տոկոս՝ 43.6 մլն դրամ, Աբովյան 27 շենքի տարածքի և օպտիկամալուխային գծերի վարձակալությունից՝ 196.4 մլն դրամ, «ԲԷՑ» ՓԲԸ-ին մատուցած լրացուցիչ ծառայությունների և տեխ. պայմանների կազմման համար՝ 1.0 մլն դրամ, փոքր ՀԷԿ-երին և Արևային կայաններին ՌՊԱ դրվածքների հաշվարկի համար՝ 13.0 մլն դրամ, և այլ ծառայությունների համար՝ 5.0 մլն դրամ: Այլ գործունեությունից ստացված եկամուտը նախահաշվով նախատեսվածից պակաս է կազմել (6.6 մլն դրամ), քանի որ արտահանման ծավալները ավելի քիչ են կազմել, քան նախատեսված է եղել Վրաստան արտահանման ընթացքում Ընկերության կողմից մատուցած ծառայությունների պայմանագրերով:

Հարկ ենք համարում նշել, որ 2022թ. փետրվարի 1-ից ՀՀ էներգահամակարգում ներդրված մեծածախ շուկայի նոր մոդելի կիրառման հետ կապված, Ընկերությունը ծառայություն է մատուցել շուկայի մասնակից դարձած նոր որակավորված սպառողներին (շուրջ 110.96 մլն դրամ), որոնց կողմից գնված էլեկտրաէներգիայի քանակները նախատեսված չեն եղել ՀԾԿ հանձնաժողովի կողմից 2022թ. համար հաստատված սակագնի հաշվարկով:

Ընկերության գործառնական եկամուտները կազմել են 2264.0 մլն դրամ:

1.1.2.Ընկերության ակտիվների վերագնահատման և շնորհների ձևակերպումների արդյունքում ձևավորվել է **ոչ գործառնական եկամուտներ՝ 2328.7մլն դրամ:**

1.1.3.Միջազգային ստանդարտներին համապատասխան հաշվապահական հաշվեկշռի կազմման նպատակով, որպես եկամուտ հաշվարկվում է գործառնական (2264.0մլն դրամ) և ոչ գործառնական (2328.7մլն դրամ) եկամուտների հանրագումարը՝ **4592.7մլն դրամ:**

1.2.Ծախսեր (առանց ԱԱՀ)

1.2.1.Ընկերության տարեկան գործառնական ծախսերը կազմել են **2071.5մլն դրամ** (հավելված 2), որից՝

նյութական ծախսեր - կազմել են 54.4մլն դրամ (նախահաշվով նախատեսված 53.4մլն դրամ գումարի դիմաց), վառելիքի և տրանսպորտային միջոցների պահպանման ծախսերը կազմել են 23.0մլն դրամ (նախահաշվով նախատեսված 25.1մլն դրամ գումարի դիմաց), էլեկտրաէներգիայի ծախսը կազմել է 26.9մլն դրամ (նախահաշվով նախատեսված 24.67մլն դրամ գումարի դիմաց): Տարբեր պահեստամասերի և սարքավորումների, վահանակի էլեկտրոնային լամպերի ծախսերը կազմել են 4.5մլն դրամ (նախահաշվով նախատեսված 3.6մլն դրամ գումարի դիմաց):

մաշվածություն - հաշվարկվել է 704.5մլն դրամ (նախահաշվում նախատեսված 53.4մլն դրամ գումարի դիմաց), քանի որ Համաշխարհային Բանկի և Ճապոնական Բանկի կողմից տրամադրված վարկային միջոցների հաշվին ձեռք բերված կազմ.տեխնիկայի, համակարգչային ծրագրի և SCADA ծրագրով նախատեսված հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների գումարը ներառված չէ ինչպես ՀԾԿ հանձնաժողովի կողմից հաստատված ամսական ծառայության վճարի հաշվարկում, այնպես էլ Ընկերության տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշվում, որի արդյունքում ամորտիզացիոն ծախսերը, որոնք հաշվարկվել են նաև հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին համապատասխան նախահաշվից ավելի է հաշվարկվել 651.1մլն դրամ;

սպասարկման ծախսեր - կազմել են 68.4մլն դրամ (նախահաշվով նախատեսված 68.4մլն դրամ գումարի դիմաց), որում ընդգրկվել են Կարգավարական վահանակի սպասարկման և վերանորոգման ծախսերը՝ 37.2մլն դրամ, սերվերների և համակարգիչների սպասարկման և վերանորոգման ծախսերը՝ 31.2մլն դրամ;

վերանորոգման ծախսեր - կազմել են 42.2մլն դրամ (նախահաշվով նախատեսված 42.2մլն դրամ գումարի դիմաց), որում ընդգրկվել են SCADA/կապ համակարգի սարքավորումների (OPGV OУԱՄ) ստուգումների, թերությունների հայտնաբերման և վերացման աշխատանքները:

աշխատավարձ - հաշվարկվել է 881.5մլն դրամ (նախահաշվով նախատեսված 884.3մլն դրամ գումարի դիմաց);

այլ ծախսեր - կազմել են 86.8մլն դրամ (նախահաշվով նախատեսված 92.8մլն դրամ գումարի դիմաց), որում ընդգրկվել են հեռախոսային և ինտերնետային կապի

ծախսերը 10.8մլն դրամ (նախահաշվով նախատեսված էր 10.6մլն դրամ); գործուղման ծախսերը 6.1մլն դրամ (նախահաշվով նախատեսված էր 10.0մլն դրամ); կարգավորման պարտադիր վճարը և չփոխհատուցվող ծախսերը 6.3մլն դրամ (նախահաշվով նախատեսված էր 5.5մլն դրամ); աուդիտորական և խորհրդատվական ծառայությունները 1.6մլն դրամ (նախահաշվով նախատեսված էր 2.0մլն դրամ); վարձակալական վճարը 17.9մլն դրամ (նախահաշվով նախատեսված էր 21.5մլն դրամ); պահպանության հետ կապված ծախսերը 15.1մլն դրամ (նախահաշվով նախատեսված էր 15.1մլն դրամ); ավտոմեքենաների ապահովագրության ծախսերը 3.7մլն դրամ (նախահաշվով նախատեսված էր 3.7մլն դրամ); օպերատիվ աշխատողների բժշկական ապահովագրության ծախսերը 4.7մլն դրամ (նախահաշվով նախատեսված էր 4.5մլն դրամ); կոմունալ տնտեսության, գրասենյակային ապրանքների, բանկի սպասարկման և այլ չնախատեսված ծառայությունների և ապրանքների ձեռք բերման հետ կապված ծախսերը 20.6մլն դրամ (նախահաշվով նախատեսված էր 19.13մլն դրամ); 2022թ. ընթացքում լրացուցիչ ձեռք են բերվել համակագիչներ, պլանշետներ, համակարգչային արքեսուարներ, սերվերների սնուցման աղբյուրներ, որոնց համար ծախսվել է 10.5մլն դրամ և նշված գումարները ներառվել են նախահաշվի «կոմունալ տնտեսութ. ծախսեր, գրասենյակային ապրանքների ձեռքբերում, բաժանորդագրություն և այլ չնախատեսված ծառայություններ և ապրանքներ» հոդվածում:

լիցենզիոն փարեկան փուրք - կազմել է 5.0մլն դրամ;

վարկի սպասարկման ծախսեր - կազմել են 144.1մլն դրամ (նախահաշվով նախատեսված 782.8մլն դրամ գումարի դիմաց), ինչպես ՀԾԿ հանձնաժողովի կողմից Ընկերության ամսական ծառայության վճարի հաշվարկում, այնպես էլ տարեկան ծախսերի և եկամուտների նախահաշվում ներառված են Համաշխարհային և Ճապոնական և Ասիական Զարգացման Բանկերի կողմից տրամադրված վարկերի և դրանց տոկոսների մարման համար անհրաժեշտ գումարներ (782.8մլն դրամ), սակայն ըստ ծախսերի հաշվարկման մեթոդիկայի փաստացի որպես ծախս ճանաչվել է միայն վարկի տոկոսների գումարները՝ 144.1մլն դրամ, տարբերությունը 638.7մլն դրամ (31.12.2022թ. դրությամբ «ԷԷՀՕ» ՓԲԸ վարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքը կցվում է);

Փոքր կայաններից ակտիվ և ռեակտիվ հզորության չափումները և դրանց անընդհատ ստացումը «ԷԷՀՕ» ՓԲԸ SCADA համակարգի սերվերներում ընդգրկելու նպատակով կադարվող աշխատանքներ – 6.5մլն դրամ (նախահաշվով նախատեսված 12.3մլն դրամ գումարի դիմաց), (5.8մլն դրամի աշխատանքները իրականացվել են 2021թ. ընթացքում);

Հաշվարկային նոր ծրագրային փաթեթի ներդրում - նախահաշվով նախատեսված է 155.4մլն դրամ: Փաթեթը ձեռք է բերվել և ամբողջությամբ ներդրվել է 2022թ. ընթացքում, և քանի որ նշված ծրագրային փաթեթը համարվում է ոչ նյութական ակտիվ և կապիտալացվում է, ուստի նախահաշվում որպես ծախս չի դիտարկվում:

Արևային կայաններից ակտիվ և ռեակտիվ հզորության չափումները և դրանց անընդհատ ստացումը <<ԷԷՀՕ>> ՓԲԸ-ի SCADA համակարգի սերվերներում ընդգրկելու նպատակով կատարվող աշխատանքներ – 39.8մլն դրամ (նախահաշվով նախատեսված է 39.8մլն դրամ):

2019թ. <<ԷԷՀՕ>> ՓԲԸ տարեկան նախահաշվով նախատեսվել է իրականացնել ՀՀ էներգահամակարգի հաղորդման ցանցի 2023-2032թ.թ. զարգացման ծրագրի մշակման համար հաղորդման ցանցի մոդելավորման, ստատիկ և դինամիկ կայունության, կարճ միացման հաշվարկների կատարման աշխատանքներ, որի հետ կապված, 2020թ. մրցույթում հաղթած ընկերությունը չի կարողացել ամբողջովին իրականացնել աշխատանքները, նրա հետ կնքված պայմանագիրը լուծվել է: 2021թ. հայտարարված նոր մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված ընկերության կողմից կատարած **ՀՀ էներգահամակարգի հաղորդման ցանցի 2023-2032թ.թ. զարգացման ծրագրի մշակման համար հաղորդման ցանցի մոդելավորման, ստատիկ և դինամիկ կայունության, կարճ միացման հաշվարկների** կատարման աշխատանքները կատարվել են 2022թ.-ին – 38.3մլն դրամի չափով (վերը նշվածից ելնելով՝ նախահաշվում չի նախատեսվել):

Ընդամենը գործառնական ծախսեր 2071.5մլն դրամ:

1.2.2.Փոխարժեքային տարբերությունից, վարկերի մարման դիսկոնտով հետաձգված և հարկերի հետաձգումից կատարված հաշվարկների արդյունքում ձևավորվել է ոչ գործառնական ծախսեր **653.7մլն դրամ**, որը հիմնականում առաջացել է փոխարժեքների (ԱՄՆ դոլար, XDR, ճապոնական իեն) 2022թ. վերջին նվազելու արդյունքում;

1.2.3.Միջազգային ստանդարտներին համապատասխան հաշվապահական հաշվեկշռի կազմման նպատակով որպես ծախս հաշվարկվել է գործառնական (2071.5մլն դրամ) և ոչ գործառնական (653.7մլն դրամ) ծախսերի հանրագումարը՝ **2725.2մլն դրամ:**

Արդյունքում ձևավորվել է շահույթ 1867.5մլն դրամ (4592.7 – 2725.2): Ջուտ շահույթը, շահութահարկի գծով ծախսի (39.0մլն դրամ) նվազեցումից և հետաձգված հարկի գծով փոխհատուցումից (60.0մլն դրամ) հետո կազմել է 1888.5մլն դրամ:

Ընկերության շահութաբաժնի վճարման քաղաքականությունը իրականացվում է ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի N202-Ն որոշմամբ սահմանված կարգով, ՀՀ կառավարության 2012թ. ապրիլի 5-ի N400-Ն որոշմամբ և կատարված լրացումների և փոփոխությունների հաշվառմամբ և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2006թ.-ի նոյեմբերի 30-ի N1110-Ն հրամանով հաստատված <<50 տոկոսից ավել պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերությունների շահութաբաժնի հաշվարկման հաշվարկ>>-ի համաձայն: Ըստ հրամանով հաստատված հաշվարկի (կցվում է) 070 տողը 2022թ. արդյունքներով (հաշվի առած ավելացումները) կազմել է 1913.38մլն դրամ (շահույթ):

Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցման ենթակա շահութաբաժնի գումարը կազմում է զուտ շահույթի, հաշվի առած ավելացումները, 50%-ը կամ 956.69մլն դրամ:

Վերը նշված շահույթը ձևավորվել է արտարժույթի փոխարժեքային դրական տարբերությունից:

Ընկերությունը վարկային պարտավորությունների հաշվապահական ձևակերպումը իրականացնում է այդ պարտավորությունների ձեռք բերման համապատասխան արտարժույթով (ԱՄՆ դոլար, Ճապոնական իեն, XDR):

Պարտավորությունների ձևակերպման արդյունքում <<շահույթը>> կազմել է 1888.5մլն դրամ, որը իրականում որպես դրամական միջոց գոյություն չունի:


ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 30.11.2006թ. N1110 հրամանի հիման վրա կատարվող հաշվարկով, ընկերությունը 2022թ. պետք է վճարի զուտ շահույթին գումարած ավելացումների 50 տոկոսը՝ (1913380.0 x 50%) 956.69մլն դրամ շահութաբաժին: Վճարման ենթակա նշված գումարը Ընկերությունը չունի և այն չի կարող ներառվել Ընկերության հաջորդ տարվա սակագնում որպես եկամուտ (շահութաբաժնի վճարման գծով կատարված ծախսերը վերականգնելու նպատակով):

Ելներով վերոհիշյալից, անհրաժեշտ ենք համարում դիմել Ընկերության տարեկան ժողովին, առաջարկելով սահմանել Ընկերության շահութաբաժնի

վճարման չափ 22.5մլն դրամ, (որը համապատասխանում է ՀՀ Կառավարության 19.07.2012թ. N899-Ն որոշմամբ հաստատված օրինակելի ձևաչափի 8-րդ տողով նախատեսված գումարին), նվազեցնել շահութաբաժնի վճարման չափը (956.69 – 22.5) 934.19մլն դրամով և այդ գումարի չափով՝ բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով՝ սահմանված կարգով ապահովել Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը:

Ընդհանուր ուղղակի (գործառնական) ծախսերի մեջ առանձին ծախսային հոդվածների համամասնությունը տոկոսային արտահայտությամբ կազմում է՝

Ծախսեր	մլն դրամ	%
Հաշվարկներ աշխատակազմի հետ	881.5 մլն դրամ	42.6
Նյութական ծախսեր	54.4 մլն դրամ	2.6
Մաշվածություն	704.5 մլն դրամ	34.0
Վերանորոգման ծախսեր	42.2 մլն դրամ	2.0
Սպասարկման ծախսեր	68.4 մլն դրամ	3.3
Վարկի %-ի մարում	144.1 մլն դրամ	7.0
Փոքր կայաններից հզորության չափման, դրանց անընդհատ ստացման, արևային կայաններից ակտիվ և ռեակտիվ հզորության չափումների, ՀՀ էներգահամակարգի հաղորդման ցանցի 2023-2032թ.թ. զարգացման ծրագրի մշակման աշխատանքներ	84.6 մլն դրամ	4.1
Այլ ծախսեր	91.8 մլն դրամ	4.4
ԸՆԴԱՄԵՆԸ	2071.5 մլն դրամ	100



■ Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ
■ Նյութական ծախսեր
■ Մաշվածություն
■ Վերանորոգման ծախսեր
■ Սպասարկման ծախսեր
■ Վարկի %-ի մարում
■ Փոքր կայաններից հզորության չափման, դրանց անընդհատ ստացման, արևային կայաններից ակտիվ և ռեակտիվ հզորության չափումների, ՀՀ էներգահամակարգի հաղորդման ցանցի 2023-2032թ.թ. զարգացման ծրագրի մշակման աշխատանքներ
■ Այլ ծախսեր

2.ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ (ԱԱՀ-ով) (հավելված 3)

2022թ. հունվարի 1-ի դրությամբ ընկերության դրամական միջոցների մնացորդը կազմել է 640.3մլն դրամ: 2022թ. ընթացքում մուտք է եղել 2668.2.1մլն դրամ, այդ թվում ներքին շուկայում մատուցած ծառայության դիմաց (<<ՀԵՑ>> ՓԲԸ և շուկայի մասնակից որակավորված սպառողներ) 1918.8մլն դրամ, արտահանման ընթացքում մատուցած ծառայությունների դիմաց (<<ԵրԶԷԿ>> ՓԲԸ) 346.3մլն դրամ և 403.1մլն դրամ այլ ծառայությունների դիմաց:

Ծախսվել է տարվա ընթացքում 2597.0մլն դրամ, այդ թվում՝

- աշխատավարձ - 682.4մլն դրամ
- եկամտային հարկ - 180.6 մլն դրամ
- ԱԱՀ - 374.8մլն դրամ
- հողի հարկ, գույքահարկ, լիցենզիոն տուրք, ՀԾԿ անդամավճար - 10.2մլն դրամ
- սոց վճար և դրոշմանիշային վճար - 29.6 մլն դրամ
- շահութահարկ և շահութահարկի կանխավճար - 92.9 մլն դրամ
- շահութաբաժին - 19.0մլն դրամ
- կապի ծառայություններ - 13.2մլն դրամ
- նյութական ծախսեր - 62.8մլն դրամ
- վերանորոգման ծախսեր - 57.5մլն դրամ
- մարվել է՝ վարկ և վարկի % - 771.2մլն դրամ
- գործուղման ծախսեր - 6.0մլն դրամ
- սպասարկման ծախսեր (տեսասպասար և սերվերներ) - 74.8մլն դրամ
- վարձակալական վճար
(<<Մեդրոն>>, <<ԲԷՑ>>, <<Տելեկոմ Արմենիա>> ՓԲԸ և <<Յուրոմ>> ՍՊԸ) - 21.5մլն դրամ
- գրասենյակային պիտույքներ, գույք, համակարգչային տեխնիկա և տնտեսական ապրանքներ և այլն - 24.1մլն դրամ
- աուդիտորական և խորհրդատվական ծառայություններ - 1.97մլն դրամ
- պահպանության հետ կապված ծախսեր - 15.1մլն դրամ
- Արասբարան-1,2 ՕԳ-երի վրա օպտիկամանրաթելքային մալուխի անցկացման աշխատանքներ (կանխավճար) - 30.0մլն դրամ
- ՀՀ էներգահամակարգի հաղորդման ցանցի 2023-2032թ.թ. զարգացման ծրագրի մշակման համար հաղորդման ցանցի մոդելավորման, ստատիկ և դինամիկ կայունության, կարճ միացման հաշվարկների կատարման աշխատանքներ - 27.6մլն դրամ
- Փոքր ԷԿ-եր հեռաչափումների ինտեգրումը և կարգաբերումը SCADA կապ համակարգում - 30.0մլն դրամ
- <<Գանձասար Օպերատոր>> ՓԲԸ-ին ֆինանսական աջակցություն - 9.95մլն դրամ
- դրամական օգնություն աշխատողներին - 11.1մլն դրամ
- ավտոմեքենաների և աշխատողների բժշկական ապահովագրություն (օպերատիվ անձնակազմի և ավտոմեքենաների) - 8.7մլն դրամ
- էլ.մարտկոցներ և անխափան սնուցման աղբյուրներ - 13.4մլն դրամ
- այլ ծախսեր - 28.6մլն դրամ

Դրամական միջոցների մնացորդը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է

711.5մլն դրամ:

3. ԴԵՔԻՏՈՐՆԵՐ ԵՎ ԿՐԵԴԻՏՈՐՆԵՐ

3.1 Դեքիտորական պարտքերը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել են 263451.3 հազ.դրամ, 2022թ. հունվարի 1-ի դրությամբ դեքիտորական պարտքի մնացորդը կազմել է 252278.6 հազ.դրամ (տեղեկանքը կցվում է):

3.2 Կրեդիտորական պարտքերը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել են 29018.3 հազ.դրամ, 2022թ. հունվարի 1-ի դրությամբ կրեդիտորական պարտքի մնացորդը կազմել է 164553.4 հազ.դրամ:

Ժամկետանց դեքիտորական և կրեդիտորական պարտքեր Ընկերությունը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ չունի:

IV. ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

Ընկերության կազմակերպական կառուցվածքը (կցվում է) խորհուրդը հաստատել է 2022թ. դեկտեմբերի 27-ին: Ընկերության աշխատողների թվաքանակը՝ համաձայն խորհրդի կողմից 2022թ. դեկտեմբերի 27-ին հաստատված հաստիքացուցակի, կազմել է 189 հաստիք, փաստացի աշխատողների միջին ցուցակային թվաքանակը 2022թ. ընթացքում կազմել է 174 մարդ, այլ աշխատանքներ իրականացնելու նպատակով, հրավիրված աշխատակիցների տարեկան թվաքանակը՝ 3 մարդ: 2022թ. ընթացքում աշխատանքի են ընդունվել 7 մարդ, աշխատանքից ազատվել 8 մարդ:

Մասնագիտական որակավորում պահանջվող աշխատողների 96%-ը ունեն համապատասխան բարձրագույն կրթություն, աշխատողների 40.0%-ը մինչև 35 տարեկան են, 43.0%-ը՝ 35 – 50 տարեկան, 17.0%-ը 50-ից բարձր տարիք ունեցող աշխատողներ են:

2022թ. ընթացքում աշխատողներին վճարված աշխատավարձը և դրան հավասարեցված վճարները կազմել է 881.5մլն դրամ, նախահաշվով նախատեսված 884.3մլն դրամի դիմաց, միջին ամսական աշխատավարձը՝ հաշվարկված նաև հրավիրված աշխատակիցների քանակը և աշխատավարձը կազմել է 415.0հազ.դրամ (նախորդ տարի ամսական միջին աշխատավարձը կազմել է 383.7հազ.դրամ):

Մեկ աշխատողի միջին ամսական աշխատավարձի աճը կազմել է 7.5%:

Խորհրդի 26.07.2013թ. նիստի որոշմամբ Ընկերությունում գործում են՝ <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> ՓԲԸ-ի օպերատիվ աշխատանքներին անմիջական մասնակցություն ունեցող աշխատակիցների ամսական պարգևատրման>> Կարգը; <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> ՓԲԸ աշխատողների արտադրատնտեսական գործունեության եռամսյակային արդյունքների համար պարգևատրման ցուցանիշների, պայմանների, չափերի և կարգի մասին>> դրույթը և <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> ՓԲԸ աշխատակիցներին զուտ շահույթի հաշվին դրամական օգնություն տրամադրելու մասին>> Կարգը՝ հաստատված <<Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր>> ՓԲԸ-ի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

V. Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ 2022 թվականի պետական բյուջեով նախատեսված 1167 Ծրագրի 42007՝ Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Կարգավարման կառավարման ավտոմատացված համակարգի (SCADA) ընդլայնման ծրագրի շրջանակներում ենթավարկի տրամադրում «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ին միջոցառման (այսուհետ՝ Միջոցառում) 2022 թվականի (այսուհետ՝ հաշվետու ժամանակահատված) բյուջեի կատարման վերաբերյալ

Հաշվետու ժամանակահատվածի համար Միջոցառման բյուջեն կազմում էր 676,594.4 հազ. ՀՀ դրամ (1,417.10 հազ. ԱՄՆ դոլար), որից վարկային միջոցների հաշվին՝ 658,212.6 հազ. ՀՀ դրամ (1,378.60 հազ. ԱՄՆ դոլար), համաֆինանսավորման միջոցների հաշվին՝ 18,381.8 հազ. ՀՀ դրամ (38.50 հազ. ԱՄՆ դոլար):

2022 թվականի ապրիլի 4-ին սահմանված կարգով կատարված վերաբաշխման արդյունքում, Միջոցառման համաֆինանսավորման միջոցներն ավելացել են 28,000,000 ՀՀ դրամի չափով, որը համարժեք է 58,644.9 ԱՄՆ դոլարին:

Միջոցառման ճշտված բյուջեն կազմել էր 704,594.4 հազ. ՀՀ դրամ (1,475.74 հազ. ԱՄՆ դոլար), որից վարկային միջոցների հաշվին՝ 658,212.6 հազ. ՀՀ դրամ (1,378.60 հազ. ԱՄՆ դոլար), համաֆինանսավորման միջոցների հաշվին՝ 46,381.8 հազ. ՀՀ դրամ (97.14 հազ. ԱՄՆ դոլար):

ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 29-ի N 1518-Ն որոշման համաձայն կատարվել է վերաբաշխում 216,086.02 հազ. ՀՀ դրամի չափով (452.58 հազ. ԱՄՆ դոլար), որից վարկային միջոցների հաշվին՝ 209,121.31 հազ. ՀՀ դրամ (438.00 հազ. ԱՄՆ դոլար), իսկ համաֆինանսավորման միջոցների հաշվին՝ 6,964.72 հազ. ՀՀ դրամ (14.59 հազ. ԱՄՆ դոլար):

Միջոցառման ճշտված բյուջեն կազմում է 488,508.4 հազ. ՀՀ դրամ (1,058.37 հազ. ԱՄՆ դոլար), որից վարկային միջոցների հաշվին՝ 449,091.3 հազ. ՀՀ դրամ (973.81 հազ. ԱՄՆ դոլար), համաֆինանսավորման միջոցների հաշվին՝ 39,417.1 հազ. ՀՀ դրամ (84.56 հազ. ԱՄՆ դոլար):

Միջոցառման շրջանակներում կատարված աշխատանքները կազմում են 348,264.8 հազ. ՀՀ դրամ (739.55 հազ. ԱՄՆ դոլար), որից վարկային միջոցների հաշվին՝ 308,656.5 հազ. ՀՀ դրամ (655.59 հազ. ԱՄՆ դոլար), համաֆինանսավորման միջոցների հաշվին՝ 39,608.3 հազ. ՀՀ դրամ (83.96 հազ. ԱՄՆ դոլար):

Միջոցառման շրջանակներում կատարված փաստացի վճարումները կազմում են

488,508.4 հազ. ՀՀ դրամ (1,058.37 ԱՄՆ հազ. դոլար), որից վարկային միջոցների հաշվին՝

449,091.3 հազ. ՀՀ դրամ (973.81 հազ. ԱՄՆ դոլար), համաֆինանսավորման միջոցների հաշվին՝ 39,417.1 հազ. ՀՀ դրամ (84.56 հազ. ԱՄՆ դոլար):

Միջոցառման շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները և վճարումները ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների, այդ թվում՝

Ընթացիկ ծախսեր, այդ թվում՝

